ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 փետրվարի 2012 թվականի թիվ 25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 19 ՄԱՅԻՍԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի 12-րդ և 67-րդ հոդվածներով և հիմք ընդունելով <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 30.05.2011 թ. թիվ-186 գրությունը, հաշվի առնելով, որ 1973 թվականի հունվարի 17-ի ՀՍՍՀ Մինիստրների Սովետի թիվ 21 որոշումով Նոյեմբերյանի շրջանային հիվանդանոցը անվանակոչված է Նիկոլայ Եգորի Նասիբյանի անունով

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 19-ը մայիսի 2011թ. <<<<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին >> թիվ 51-Ա որոշման մեջ ավելացնել նոր 12-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<12. <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունը անվանակոչել Նիկոլայ Նասիբյանի անվամբ և այսուհետև <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունը անվանել << Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն:

2.Հաստատել<< Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ կանոնադրության փոփոխությունը:

3. <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ